


մը սպասուածէ և կառաջնորդէ: Իսկ ինձ թոյլ տուէք այս տեղ մնալ
մէկ րոպէ (ժպտալով) նոյն իրերի օգտի համար, որոնք պէտք է տեղա-
փոխուեն այստեղ, եւ եթէ դուք համաձայն էք, հէնց եզուց կարող
ենք տեղափոխուել: (Կիսաձայն): Ինչո՞ւ համար էք սխմում իմ ձեռ-
քը: Ես արգարե ոչ մի բան չեմ զոհարերում, բայց ձեզ հոգևով
սփսոսումեմ և յարգում բոլոր սրտովս:

Ագաթա. (Սաստիկ յուզուած ծածկումէ ձեռքով աչքերը, յետոյ
իջեցնումէ ձեռքերը սրտի վերայ և հեռանումէ լուռ ու մունջ (ընդհատ
ձայնով): Երթանք Հուգօ. երթանք: (Գնումէ նորա հետ):

Տ. Աօլմուտ, (Մօտ է վազում Բօլֆին և համբուրումէ նորա ձեռ-
քը, յառաջ քան նա ժամանակ է գտնում ձեռքը յետ քաշել. իսկ
յետոյ համբուրումէ նորա և միւս ձեռքը): Այս իմ կեանքի ամենա-
բախտաւոր օրն է, նորան ես երբէք չեմ մոռանալ (արագ դուրս է
գնում):

(Երբն-իւնի)

(Թարգմ.) Զ. Տէր Զարարեանց:



(Հանգստեալ Մեղրոյ Թաղեալեանի Բանաստեղծութեաննէնց)

ՄԻ ՄՈՌԱՆԱՐ.

Մի մոռանար քաղցրիկ որդեակ.
Ասաց մայր իմ, յերգ անուշակ.
Մի մոռանար, յորժամ հեռի
Պանդխտիցիս յօտար երկրի.
Մի մոռանար, երբ մոլենին
Քեզ առ ի մեղս շաւիղ հորդեն,
Մի մոռանար՝ երբ ի յանցանք
Մղիցեն քեզ կիրք և փորձանք,
Մի մոռանար, երբ յաղօթից
Հաղբք հեշտութեանց որսացեն
Չքեզ,
Մի մոռանար՝ ի մատաղ տիս:

Այլ մշտապէս մտածեա՛ զիս.
Տես, իմ որդեակ, որքան գթով
Անմեղ փից քոց հսկեցի ես.
Մի մոռանար, երբ ձեռք մահուն
Զայս կափուցեն աչքեր ի քուն
Շուրջ հնչեսցեն հովք հիսպե-
րեան՝
Կամ ծածկիցեն խորք զիմ տա-
պան.
Ո՛ր հասակ քեզ, կամ ո՛ր վիճակ
Մի մոռանար զիս՝ իմ որդեակ.

ԽՈԿՈՒՄՆ.

Երջանիկ ժամ երբ ունիս գալ,

Երուցանել փափաք սրտիս.

Խոկալ միայն և ո՛չ ջանալ՝

Ձէ գործ իրաւ Ազգասիրիս:

Այլ ճշմարիտ Ազգասիրին

Հանապազօր միտք աշխատին,

Զի օգտակար և վայելուչ

Գործովք սպաս հարցեն ազգին.

Հապա՞ պարտէ, ո՞վ Ազգասէր,

Աւրեղ յուսալ, ի քէն խնդրել,

Զի մեր գործոց լիցիս ուղղիչ

Սիրոյ կայան և կազդուրիչ:

Մատուցանեմ անկեղծ սրտով

Սիրայորդոր բանիցըս զով,

Բայց ասացից ո՞ր բերանով,

Որ յայտնեսցէ գոնէ կիսով:

Հոգիս յօժար մարմին տկար,

Ո՞վ ինձ տացէ բան և հանճար.

Յուսմէ՞ գտից ինձ օգնութիւն,

Յո՞ գիմեցից, յա՞զգ թէ յօտար

Տո՞ւր աղաչեմ, տո՞ւր ինձ բար

բար

Տո՞ւր Տէր օճան, տուր և զկար,

Չեսք փութաջան, միտք կամա

կար

Գործել ինձ զայն՝ որ է յարմար

ՊԱՏԵՐԱԶՄ ԽՕԼԵՐԻ ԴԷՄ

Բոլոր տէրութիւնները հրատարակում են պատուէրներ և կանոններ ի գիտութիւն իրանց ժողովրդեան՝ խօլերից զգոյշ կենալու համար: Այստեղից երևում է թէ որքան ծանրակշիռ հարց է խօլեր հիւանդութիւնը. ուստի այստեղ գնում ենք այնպիսի կանոններ որոնք պահանջում են ամենատակաւ նիւթական միջոցներ:

Խօլեր եղած տեղից թոյլ չքտալ բնակիչներին ոչ մի պայմանով գաղթել մի ուրիշ տեղ, որովհետև գաղթելովը հիւանդութիւնը տարածվում է աւելի և աւելի. մանաւանդ որ նոյն տեղը մնալով և կանոնաւոր կեանք վարելով կարելի է չքհիւանդանալ: Մի տնից կամ տեղից՝ ուր խօլեր կայ, կերակուրի համար նիւթեր չբերել. իսկ եթէ չէ յայտնի ուտելիքի որտեղից լինելը, լաւ է գործ գնել նորան եփած. մանաւանդ հարկաւոր է կաթը հում գործ չգնել: Մարտդական գործարանները պէտք է կարգին պահել. ուստի զգուշանալու է դժարամարս և փորլուծութիւն պատճառող ուտելիքներից. իսկ եթէ մի փոքր խանգարումն ևս լինի մարտդա-